ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ, որի ընթացքում Նորին Սրբությունը հրապարակեց հայրապետական տնօրինությունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերում և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարված փոփոխությունների և նոր նշանակումների մասին:

Հայրապետական բարձր տնօրինությամբ.

1. ***Գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը*** նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական մարմնի պատասխանատու՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետի պարտականություններից:

2. ***Գերշ. Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը*** նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու՝ ազատվելով Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդի պարտականություններից:

3. ***Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանը*** նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ՝ ազատվելով Արագածոտնի թեմի առաջնորդի պարտականություններից:

4. ***Հոգշ. Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը*** նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների պատասխանատու՝ ազատվելով Շիրակի թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից:

5. ***Հոգշ. Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը*** նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր նախկին պարտականություններից:

6. ***Հոգշ. Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը*** նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի վարիչ-տնօրենի պաշտոնից:

7. ***Հոգշ. Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը*** նշանակվել է Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Ս. Հռիփսիմե վանքի վանահոր պարտականություններից:

Հայրապետական մեկ այլ հրամանով Արարատյան Հայրապետական թեմի Սևանի Վազգենյան դպրանոցը և Երևանում գործող Հայորդյաց տներն անցնում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորության և ենթակայության տակ: Հայորդյաց տների հոգևոր տեսուչ է նշանակվել Հոգշ. Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը: Վազգենյան դպրանոցի տեսչի պաշտոնը կշարունակի վարել Արժանապատիվ Տ. Սինաս քհն. Մարտիրոսյանը:

Նույն կերպ դեկտեմբերի 10-ից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի վարիչ-տնօրեն է նշանակվել Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետի մեկ այլ հրամանով Տ. Արշեն աբեղա Սանոսյանը դեկտեմբերի 10-ից նշանակվել է ՀՀ բանակի հոգևոր խորհրդական: Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը, ազատվելով բանակի խորհրդականի պաշտոնից, նշանակվել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ